ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

« ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀՔԿԴ-16/2 » ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ Քննչական կոմիտեի կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 26.08.2016թ. ժամը 11-00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Լ.Սաֆարյանը, Վ. Մկրտչյանը, Ե.Հովհաննիսյանը, Մ.Անտոնյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

« ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀՔԿԴ-16/2» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին.

Ա) հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ (ք. Երևան, Զ. Սարկավագի 157)**
2. **«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ (ք. Երևան, Դրոյի 8, բն. 4)**
3. **«ԱՐՑԱԽ ԿԱՐԻ-ԿՈՇԻԿԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ (ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 1)**
4. **«ՖԻՐՄԱ ԼԻԴԱ» ՍՊԸ (ք. Երևան, Միրաքյան 56ա)**

Բ) հայտ չեն ներկայացրել համակարգում 26.08.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 «ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

3.2 «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում /հայտում առկա փաստաթղթերում/ չեն **պահպանվել հրավերի 1-ին մասի 7.9 կետի պահանջը:**

3.3. «ՖԻՐՄԱ ԼԻԴԱ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում Գնային առաջարկը՝ Հավելված 4-ը, չի համապատասխանում հրավերի պահանջներին. Տառերով գրված ընդհանուր գինը անհասկանալի է (տառերը հայերեն չեն):

3.4. Հրավերի 1-ին մասի 7.9 կետի պահաջի համաձայն Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային

գնումների համակարգի միջոցով հայտով փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: **«ԱՐՑԱԽ ԿԱՐԻ-ԿՈՇԻԿԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ-ն** հայտը ներկայացրել է որպես Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակից, հայտի Հավելված 1-ում՝ ընթացակարգին մասնակցելու դիմումում նշել է, որ կազմակերպությունը հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ և որպես կազմակերպության հասցե նշված է ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ա.Առաքելյան 1:

Հանձնաժողովը որոշեց՝

Կասեցնել նիստը և **«ԱՐՑԱԽ ԿԱՐԻ-ԿՈՇԻԿԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ** -ի ՀՀ ռեզիդենտության հարցի վերաբերյալ պարզաբանում ստանալու համար հարցում կատարել ՀՀ Ֆինանսների Նախարարություն:

Հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ՖՆ -ից պատասխան ստանալու օրը, համապատասխան ժամին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Լ.Սաֆարյան

_____ Վ. Մկրտչյան

_____ Մ.Անտոնյան

_____ Ե.Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

« ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀՔԿԴ-16/2 » ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ Քննչական կոմիտեի կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 31.08.2016թ. ժամը 15-30-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Լ.Սաֆարյանը, Վ. Մկրտչյանը, Ե.Հովհաննիսյանը, Մ.Անտոնյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

ՀՀ Ֆինանսների Նախարարությունից ստացված պարզաբանման վերաբերյալ

Շահութահարկով հարկման նպատակով հարկ վճարողների ռեզիդենտության հետ կապված հարցերը կարգավորված են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, նույն օրենքի իմաստով ռեզիդենտ են համարվում Հայաստանի Հանրապետությունում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված, կանոնները գրանցած) կազմակերպությունները և պայմանագրային ներդրումային ֆոնդերը:

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ-ում պետական գրանցման կամ հաշվառման ենթակա են իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները:

Այսպիսով՝ «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ն շահութահարկով հարկման նպատակով կհամարվի ՀՀ ռեզիդենտ, եթե վերջինս կամ վերջինիս առանձնացված ստորաբաժանումը համարվի ՀՀ-ում պետական գրանցում ստացած (հաշվառված) կազմակերպություն:

Հանձնաժողովը որոշեց՝

Կասեցնել նիստը և դիմել ՀՀ Պետական եկամուտների կոմիտե, միաժամանակ նաև «ԱՐՑԱԽ ԿԱՐԻ-ԿՈՇԻԿԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ –ին՝ ճշտելու համար արդյոք <<Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում>> ՓԲԸ-ն Հայաստանի Հանրապետությունում ունի առանձնացված ստորաբաժանում կամ մասնաճյուղ:

Հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ՊԵԿ –ից և կազմակերպությունից պատասխան ստանալու օրը, համապատասխան ժամին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Լ.Սաֆարյան

_____ Վ. Մկրտչյան

_____ Մ.Անտոնյան

_____ Ե.Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

« ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀՔԿԴ-16/2 » ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ Քննչական կոմիտեի կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 01.09.2016թ. ժամը 11-00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Լ.Սաֆարյանը, Վ. Մկրտչյանը, Ե.Հովհաննիսյանը, Մ.Անտոնյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից և «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ից ստացված պատասխանի վերաբերյալ

1. Համաձայն ՀՀ ՊԵԿ գրության՝ «Արցախի Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ն ունի օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում գրանցված մասնաճյուղ:
2. «Արցախի Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ն գրությամբ պատասխանել է , որ Կազմակերպությունը իր ՀՀ ռեզիդենտության հարցով դիմել է ՀՀ ՖՆ պարզաբանում ստանալու համար:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Առարկայի անվանումը	Քանակ	Չափման միավոր	Նախահաշվային գին /հազար դրամ/	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/			
					«ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ*	«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ*	«ՖԻՐՄԱ ԼԻԴԱ» ՍՊԸ*	«ԱՐՑԱԽ ԿԱՐԻ-ԿՈՇԻԿԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ*
1	Վերնաշապիկներ	74	հատ	555.0	209667	338920	222000	
2	Վերնաշապիկներ	1298	հատ	11033.0	3894000	6490000	4153600	
3	Վերնաշապիկներ	1298	հատ	11033.0	3894000	6490000	4153600	
4	Վերնաշապիկներ	1298	հատ	9735.0	3677667	5944840	3894000	
5	Վերնաշապիկներ	74	հատ	629.0	222000	370000	236800	
6	Վերնաշապիկներ	74	հատ	629.0	222000	370000	236800	
7	Վերնաշապիկներ	74	հատ	555.0	209667	338920	222000	
8	Վերնաշապիկներ	1298	հատ	9735.0	3677667	5944840	3894000	

9	Մինչ-կոճերը հասնող կոշիկներ	649	զույգ	10384.0	4543000	3699300		4945380
10	Մինչ-կոճերը հասնող կոշիկներ	37	զույգ	592.0	259000	214045		280830

* Մասնակիցները ներկայացրել են հայտարարություն Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու վերաբերյալ:

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց՝

1. Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ -ին:**

2. Հիմք ընդունելով ՀՀ ՖՆ և ՀՀ ՊԵԿ գրությունները «ԱՐՑԱԽ ԿԱՐԻ-ԿՈՇԻԿԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ-ն համարել ՀՀ ռեզիդենտ:

3. Մերժել **«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ, «ԱՐՑԱԽ ԿԱՐԻ-ԿՈՇԻԿԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ և «ՖԻՐՄԱ ԼԻԴԱ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտերը՝ հիմք ընդունելով** ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) **44-րդ կետի 4-րդ ենթակետը**:

4. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 12.00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետերի՝ առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ՖՆ,
2. Համաձայն Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Լ.Սաֆարյան

_____ Վ. Մկրտչյան

_____ Մ.Անտոնյան

_____ Ե.Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան